

# Երկրորդ փուլ

## GIS (USZ) հիմնական գործիքակազմ և նախագծային կիրառում

Աշխարհագրական տեղեկատվական համակարգերը (Geographic Information Systems) տարածական տվյալների բազաների ստեղծման, տարածաժամանակային վերլուծությունների և դրանց վիզուալիզացիայի համակարգ է, որն օգտագործվում է ժամանակակից տնտեսության գրեթե բոլոր ոլորտներում: Այն լայն կիրառում ունի կառավարման, ապահովագրության, մարկետինգի, ենթակառուցվածքների (տրանսպորտ, էլեկտրամատակարարում, գազամատակարարում, հեռահաղորդակցություն), գյուղատնտեսության, ջրային ռեսուրսների կառավարման ոլորտներում:

Երկրորդ փուլում կուսուցանվեն վերլուծական գործիքակազմերը: Նախագծում կկատարվեն տարածական վերլուծության գործիքների կիրառում գործնական խնդիրների լուծման համար: Ինչպես նաև ստացված արդյունքների փոխարկում այլ համակարգերի:

Դասընթացը կվարի GIS, աղետների ռիսկերի կառավարման և ֆիզիկական աշխարհագրության մասնագետ Ստեփան Խաչատրյանը:

Դասընթացի երկրորդ փուլը կունենա հետևյալ բովանդակությունը՝

1. Վերլուծության գործիքակազմի (Analysis toolbox) գործիքներով կուսուցանվեն GIS բազային վերլուծական հնարավորությունները: Որոշ գործիքներ իրենց կիրառումը կգտնեն գործնական խնդրի լուծման մեջ:
2. Տարածական վերլուծության գործիքակազմով (Spatial analysis toolbox) կուսուցանվի GIS-ի հիմնական գաղափարին ուղղված վերլուծությունների իրականացումը: Այս հմտությունը ևս իր կիրառումը կգտնի ընթացիկ առաջադրանքի խնդիրների լուծման մեջ:
3. GIS տվյալները հեշտությամբ կարելի է փոխարկել բազմատեսակ համակարգերի: Փոխարկումը կարող է լինել ինչպես տարածական այնպես էլ աղյուսակային տեսքով: Այս հնարավորությունը թույլ է տալիս ցանկացած ոլորտում GIS արդյունքները չպահել մեկուսացված և լայնածավալ կիրառում տալ համատեղ աշխատող մի շարք ծրագրային ապահովումների:

Տևողությունը 20 ժամ՝ շաբաթական 2 պարապունք 2.5 ժամով:

Արժեքը՝ 100000 ՀՀ դրամ